ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիսի քաղաքային համայնք, ք.Մասիս Կենտրոնական հրապարակ թիվ 4.
☎ /0236/ 4-30-40. 4-04-40, էլ.փոստ masismer@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» Հուլիսի 2014 թվականի N 59-Ն

## ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հունիսի 10-ին փոթորիկի արդյունքում թիվ 3 մանկապարտեզի տանիքն էապես տուժել է, շտապ ընթացիկ վերանորոգման կարիք ունի, որի համար անհրաժեշտ նախահաշվային արժեքը կազմում է 300.0 հազ. դրամ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝ *ավագանին որոշում է.*

1.Թույլատրել Մասիս քաղաքային համայնքի 2014թ. վարչական բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 300.0 հազ. դրամով, այն ուղղելով կրթություն այլ դասերին չպատկանող (9.8.1) գործառական դասակարգման նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին (4819) հոդվածին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | | | ԿՈՂՄ ( ) | ԴԵՄ ( ) | ՁԵՌՆՊԱՀ ( ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Պապիկ | Աբգարյան | | | |
| 2. | Վաչագան | Աբգարյան | | | |
| 3. | Հրաչ | Ավետյան | | | |
| 4. | Նվեր | Գաբրիելյան | | | |
| 5. | Անդրանիկ | Գևորգյան | | | |
| 6. | Գևորգ | Գևորգյան | | | |
| 7. | Սուրեն | Զախարյան | | | |

8. Հակոբ Խուդիկյան ____________ ____________ ____________

9. Նորայր Հակոբյան ____________ ____________ ____________

10. Աբրահամ Շահվերդյան ____________ ____________ ____________

11. Գարիկ Սավադյան ____________ ____________ ____________

12. Գևորգ Ստեփանյան ____________ ____________ ____________

13. Էդմոնդ Ստեփանյան ____________ ____________ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՇԱ ՀԱԿՈԲՅԱՆ

2014 թ. հուլիսի 25

ք. ՄԱՍԻՍ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիսի քաղաքային համայնք, ք.Մասիս Կենտրոնական հրապարակ թիվ 4,
☎ /0236/ 4-30-40, 4-04-40, էլ.փոստ masismer@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» Մայիսի 2014 թվականի N32-Ա

## ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔԿԱԳ-ի բաժնի պահպանման պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար 2014թ. հատկացվել է 4358564 դրամ գումար, որը գերազանցում է բյուջեում նախատեսված եկամուտները և ծախսերը:

ՔԿԱԳ-ի բաժանմունքը գազաֆիկացվել է , սակայն 2014թ. բյուջեում ներքնային սպասարկման համար անհրաժեշտ (23,0 հազ. դրամ) գումար նախատեսված չէ:

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանը 25.02.2014թ. N2014/6 պայմանագրով Մասիսի քաղաքապետարանին նախատեսել է հատկացնել 2913,5 հազ. դրամ սուբվենցիա Մասիս քաղաքի <<Ա.Բաբաջանյանի անվան ՄՄԵԴ>> ՀՈԱԿ-ում դասավանդվող ազգային և լարային դասարաններում սովորող 15 աշակերտի ուսուցման ծախսերի փոխհատուցման համար:

2014թ. բյուջեով նախատեսված քաղաքապետարանի էլեկտրէներգիայի գումարը ցրտաշունչ ձմեռվա պատճառով չի բավականացնում, առաջացել են պարտքեր ,անհրաժեշտ է 500,0 հազ. դրամ լրացուցիչ գումար:

Քաղաքապետարանի վարչական շենքի տանիքը մասնակի վերանորոգման կարիք ունի,որի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար անհրաժեշտ է 60,0 հազ. դրամ:

Քաղաքացիներից ստացված բազմաթիվ դրամական օգնության դիմումները բավարարելու համար սոցիալական հատուկ արտոնություններ, այլ նպաստներ ուղղությամբ անհրաժեշտ է լրացուցիչ 900,0 հազ. դրամ գումար:

Քաղաքապետարանի դիմացի այգին հիմնանորոգման անհրաժեշտություն ունի, որի նախագծա-նախահաշվային աշխատանքների համար անհրաժեշտ է 1000,0 հազ. դրամ:

Քաղաքի Երևանյան- Արարատյան ու Արարատյան Հերացու փողոցների խաչմերուկների լուսաթարթչային համակարգի և անցումների լուսավորման համակարգի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար անհրաժեշտ է 400,0 հազ. դրամ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով ավագանին որոշում է

Մասիսի քաղաքային համայնքի ավագանու 24.12.2013թ. թիվ 77-ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ ։

1.Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար 2014թ. վարչական բյուջեի եկամուտները ավելացնել 1658564 դրամով, նույն չափով ավելացնել վարչական բյուջեի ծախսերը,այն ուղղելով

ա) աշխատակազմի գծով ընդհանուր բնույթի ծառայություններ (1.3.1) գործառական դասակարգման (4111) աշխատավարձի հոդվածին 1256564 դրամ:

բ) մասնագիտական ծառայություններ (4241) հոդվածին 23,0 հազ. դրամ:

գ) 379,0 հազ. դրամ գումարը ուղղել վարչական բյուջեի պահուստային ֆոնդ:

2. 2014թ. վարչական բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 1760,0 հազ. դրամով, այն ուղղելով վարչական բյուջեի ծախսերին , այդ թվում

ա) օրենսդիր գործադիր մարմինների (01.1.1) գործառական դասակարգման էներգետիկ ծառայություններ (4212) հոդվածին 500,0 հազ. դրամ, շենքերի կառույցների ընթացիկ նորոգում (4251) հոդվածին 60,0 հազ. դրամ:

բ) միջնակարգ կրթություն (9.2.2) գործառական դասակարգման նվիրատվություն շահույթ չհետապնդող այլ կազմակերպություններին (4819) հոդվածին 300,0 հազ. դրամ:

գ) սոցիալական հատուկ արտոնությունների (10.7.1) գործառական դասակարգման այլ նպաստներ բյուջեից (4729) հոդվածին 900,0 հազ. դրամ:

3. 2014թ. վարչական բյուջեից Մասիս քաղաքի <<Ա.Բաբաջանյանի անվան ՄՄԵԴ>> ՀՈԱԿ-ի դպրոցի 2014թ. հատկացվող սուբսիդիան պակասեցնել 2913,5 հազ. դրամով , նույն չափով ավելացնել ազգային և լարային նվագարանների սովորողներին տրվող սուբսիդիան 22 Արարատի մարզպետարանից տրվող միջոցների հաշվին:

4. 2014թ. քաղաքային համայնքի ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 1400,0 հազ. դրամով, այն ուղղելով

ա) ճանապարհային տրանսպորտ (4.5.1) գործառական դասակարգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ (5134) հոդվածին 400,0 հազ. դրամ:

բ) Հանգստի և սպորտի ծառայություններ (8.1.1) գործառական դասակարգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ (5134) հոդվածին 1000,0 հազ. դրամ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | | | ԿՈՂՄ ( ) | ԴԵՄ ( ) | ՁԵՌՆՊԱՀ ( ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Պապիկ | Աբգարյան | | | |
| 2. | Վաչագան | Աբգարյան | | | |
| 3. | Հրաչ | Ավետյան | | | |
| 4. | Նվեր | Գաբրիելյան | | | |
| 5. | Անդրանիկ | Գևորգյան | | | |
| 6. | Գևորգ | Գևորգյան | | | |
| 7. | Սուրեն | Զախարյան | | | |
| 8. | Հակոբ | Խուդինյան | | | |
| 9. | Նորայր | Հակոբյան | | | |

10. Աբրահամ Շահվերդյան ____________ ____________ ____________

11. Գարիկ Սավայան ____________ ____________ ____________

12. Գևորգ Ստեփանյան ____________ ____________ ____________

13. Էդմոնդ Ստեփանյան ____________ ____________ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՀԱԿՈԲՅԱՆ

2014 թ. մայիսի 27
ք. ՄԱՍԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիսի քաղաքային համայնք, ք.Մասիս Կենտրոնական հրապարակ թիվ 4,
☎ /0236/ 4-30-40, 4-04-40, էլ.փոստ masismer@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«27» Մայիսի 2014 թվականի N33-Ա

## ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՃԱԽՈՂ ՄԵԿ ԵՐԵԽԱՅԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ 2014Թ. ԲՅՈՒՋԵԻՑ ՏՐՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արարատի մարզպետարանը երաժշտական դպրոցում դասավանդվող ազգային ու լարային դասարաններում սովորող 15 աշակերտի ուսուցման ծախսերի փոխհատուցում պետք է տրամադրի ընդհանուր գումարով 2913.5 հազ. դրամ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի և 34 հոդվածի 1-ին կետի պահանջներով ավագանին որոշում է՝

1. Մասիսի <<Երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն Մասիս քաղաքային համայնքից հաճախող մեկ երեխայի պահպանման համար համայնքի բյուջեից ամսական ֆինանսավորման չափը սահմանել 18878 դրամ:
2. Այլ համայնքներից երաժշտական դպրոց հաճախող մեկ երեխայի տարեկան պահպանման վճարի չափը սահմանել 254539 դրամ:
3. Ս/թ հունիսի 1-ից ուժը կորցրած ճանաչել Մասիս քաղաքային համայնքի ավագանու 24.12.2013թ. N83-Ա որոշումը:
4. Սույն որոշումը գործողության մեջ է 2014թ. հունիսի 1-ից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | | | ԿՈՂՄ ( ) | ԴԵՄ ( ) | ՁԵՌՆՊԱՀ ( ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Պապիկ | Աբգարյան | [signature] | | |
| 2. | Վաչագան | Աբգարյան | | | |
| 3. | Հրաչ | Ավետյան | | | |
| 4. | Նվեր | Գաբրիելյան | [signature] | | |
| 5. | Անդրանիկ | Գևորգյան | [signature] | | |
| 6. | Գևորգ | Գևորգյան | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Սուրեն | Զախարյան | | | |
| 8. | Հակոբ | Խուդիկյան | | | |
| 9. | Նորայր | Հակոբյան | | | |
| 10. | Աբրահամ | Շահվերդյան | | | |
| 11. | Գարիկ | Մավարյան | | | |
| 12. | Գևորգ | Ստեփանյան | | | |
| 13. | Էդմոնդ | Ստեփանյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՀԱԿՈԲՅԱՆ

2014 թ. մայիսի 27
ք. ՄԱՍԻՍ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիսի քաղաքային համայնք, ք.Մասիս Կենտրոնական հրապարակ թիվ 4.
☎ /0236/ 4-30-40, 4-04-40, էլ.փոստ masismer@mail.ru


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» Հուլիսի 2014 թվականի N 44-Ա

## ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2014թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի նոր չափ սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները ապահովելու նպատակով Մասիս քաղաքային համայնքին հատկացված գումարները անհրաժեշտ է վերաբաշխել ըստ կառույցների :

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանը 2014թ. երաժշտական դպրոցի լարային և ազգային նվագարանների 15 աշակերտների ծախսերի փոխհատուցման նպատակով պայմանագրով քաղաքային համայնքին նախատեսվել է հատկացնել 2913,5 հազ. դրամ սուբսիդիա, սակայն 2014թ. բյուջեում համայնքը ամբողջ ծախսերը պլանավորել է երաժշտական դպրոցի ֆինանսավորում, այդ թվում նաև լարային և ազգային նվագարան-ների աշակերտների ծախսերը:

Ապրիլ ամսից քաղաքապետարանը ձեռք է բերել նոր ծառայողական ավտոմեքենա, որի վառելիքի ձեռք բերման համար անհրաժեշտ է 700,0 հազ. դրամ լրացուցիչ գումար:

Փաստաթղթերի արխիվացման համար 2014թ. բյուջեով նախատեսված գումարը չի բավարարում, լրացուցիչ անհրաժեշտ է 50,0 հազ. դրամ:

Քաղաքապետարանի վարչական շենքի տանիքի ընթացիկ նորոգման շին. աշխատանք-ների համար անհրաժեշտ է 598,0 հազ. դրամ, իսկ քաղաքի փողոցների ասֆալտի փոսային նորոգումների նախագծա-նախահաշվային աշխատանքների պատվիրման համար անհրաժեշտ է 400,0 հազ. դրամ:

Երևանյան-Արարատյան և Արարատյան-Հերացու փողոցների խաչմերուկների լուսաթարթչային համակարգի հիմնանորոգման շին. աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է 3793,0 հազ. դրամ:

Նոր թաղամասի 32 շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաթեթի պատվիրման համար անհրաժեշտ է 1000,0 հազ. դրամ:

Առաջնորդվելով <<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության 28.12.2013թ. ՀՕ 187-Ն օրենքի 1-ին հոդվածի , Հայաստանի Հանրապետության <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով ավագանին որոշում է՝

1.2014թ. վարչական բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 11124,5 հազ. դրամով՝ այն ուղղելով՝

ա)<<Նվազագույն աշխատավարձի մասին>> օրենքի (2014թ. հուլիսի 1-ից նվազագույն ամսական աշխատավարձը 50,0 հազ. դրամ սահմանելու մասին) պահանջներով Մասիսի քաղաքային համայնքի կառավարման ապարատին և համայնքի բյուջեից ֆինանսավորվող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման համար՝ հատկացնել 8887.5հազ. դրամ որպես սուբսիդիա, այն բաշխելով համաձայն հավելված 1-ի:

բ) Օրենսդիր գործադիր մարմիններ (0.1.1) գործառական դասակարգման աշխատավարձի (4111) հոդվածին՝ 489.0հազ. դրամ, ընդհանուր բնույթի այլ ծառայություններ (4239) հոդվածին՝ 50,0 հազ. դրամ, տրանսպորտային նյութեր (4264) հոդվածին՝ 700,0 հազ. դրամ, շենքերի,շինությունների ընթացիկ նորոգում (4251) հոդվածին՝ 598,0 հազ. դրամ:

գ) ճանապարհային տրանսպորտ (4.5.1) գործառական դասակարգման շենքերի,կառույցների ընթացիկ նորոգում (4251) հոդվածին՝ 400,0 հազ. դրամ:

2 2014թ. ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 4793,0 հազ. դրամով, այն ուղղելով

ա) ճանապարհային տրանսպորտ (4.5.1) գործառական դասակարգման շենքերի, կառույցների հիմնական նորոգման (5113) հոդվածին՝ 3793,0 հազ. դրամ:

բ) բնակարանային շինարարության (6.1.1) գործառական դասակարգման նախագծա-նախահաշվային աշխատանքների (5134) հոդվածին՝ 1000,0 հազ. դրամ:

3.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի կողմից տրամադրվող 2913,5 հազ. դրամ սուբսիդիան ուղղել համայնքի 2014թ. վարչական բյուջեի եկամտային մաս, այն ուղղելով վարչական բյուջեի պահուստային ֆոնդին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ՁԵՌՆՊԱՀ ( ) | | ԿՈՂՄ ( ) | | ԴԵՄ ( ) |
|---|---|---|---|---|
| 1. Պա․․յիկ | Աբգարյան | [signature] | | |
| 2. Վաչագան | Աբգարյան | | | |
| 3. Հրաչ | Ավետյան | [signature] | | |
| 4. Նվեր | Գաբրիելյան | [signature] | | |
| 5. Անդրանիկ | Գևորգյան | [signature] | | |
| 6. Գևորգ | Գևորգյան | [signature] | | |
| 7. Մուրեն | Զախարյան | | | |
| 8. Հակոբ | Խուդիկյան | | | |
| 9. Նորայր | Հակոբյան | | | |
| 10. Աբրահամ | Շահվերդյան | | | |
| 11. Գարիկ | Մավադյան | [signature] | | |
| 12. Գևորգ | Ստեփանյան | [signature] | | |
| 13. Էդմոնդ | Ստեփանյան | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Ս.ՀԱԿՈԲՅԱՆ

2014 թ. հուլիսի 11

ք. ՄԱՍԻՍ